ԼՈՒՍԻՆԵ ԳԱԼՍՏՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅՈՒՇԱՅԻՆ ՎԵՐԱՊՐՈՒՄՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՍՔԸ

«Հավերժական վերադարձի» անսպասելիության զարմանքը «Դար կորստյան»-ով վերաճեց հիացմունքի, երբ գրական հասարակության դատին հանձնվեց իրավամբ փայլուն տաղանդի այդ պատմավեպը: Երկար ժամանակ չէր անցել առաջին գործից՝ ոչ լրիվ երկու տարի: 1983 թվականին լույս տեսավ ամսագրային տարբերակը[1], իսկ 1985-ին հրատարակվեց առանձին գրքով: Վարդան Գրիգորյանը վերստին հաստատեց իր գրական խառնվածքի ինքնատիպությունը, նորարարական շունչը:

Եվ դարձյալ պատմական թեմատիկայի ոլորտում:

Ընտրությունն անակնկալ չէր, քանիցս Վարդան Գրիգորյան մեկնել էր իր նախասիրությունների եւ՝ արմատները, եւ՝ պատճառները՝ վկայելով, որ կատարել է հետազոտական-պատմագիտական լուրջ ուսումնասիրություններ ու համոզվել իր գրական հակումների նպատակաուղղվածության եւ ճիշտ կողմնորոշման մեջ: «Հավասարապես սիրելով պատմությունն ու գրականությունը,- խոստովանել է նա,- այսպես էլ անկարող եղա նախապատվությունը տալ դրանցից մեկին: Պատմությունը դարձավ մասնագիտությունս, գրականությունը՝ կյանքիս նպատակը: Երկվություն, որն իր տրամաբանական լուծումը երեւի պետք է գտներ պատմագեղարվեստական ժանրում: Ասեմ նաեւ, որ ես նույնպես չեմ խախտել «օրինաչափությունը», սկսել եմ ժամանակակից թեմայով գրված պատմվածքներով, սակայն առաջին գործը, որն ներկայացրի հրատարակության, «Հավերժական վերադարձ» պատմավեպն էր»[2]: Գրողը խոստովանում է, որ թերեւս չուներ բավարար կենսափորձ, բայց սովորել է ու ավարտել Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, ուսումնասիրել է նկարագրվող ժամանակաշրջանի պատմությունը, դեպքերն ու դեմքերը, հնարավորինս ծանոթացել է հերոսների կենցաղին, ձգտել հոգեբանական ճշմար-

տացիության: «Ինձ հուզում էին «մեծ գաղափարները»,- շարունակում է նա,- որոնք կարող են զարգացվել միայն պատմական թեմայով, դարաշրջանի ճշմարտության, պետությունների, ազգերի ու ժողովրդական շարժումների փորձի ամփոփմամբ: Միաժամանակ, որպես պատմաբանի ինձ գրավում էին պատմագիտության մեջ դեռեւս վերջնական գնահատական չստացած խնդիրները: Ընտրելով անցումային դարաշրջաններ եւ համեմատաբար «մութ» դրվագներ՝ ձգտում էի դրանց պատմագեղարվեստական բացահայտմանը»[3]:

Վ. Գրիգորյանի ստեղծագործական նախասիրությունները մարդ-հասարակություն-ժամանակ կապերի ու փոխհարաբերությունների հետախուզումն էր, պատմության բեկումնային շրջադարձերի գեղարվեստական արտացոլումը: Այդ ելակետերից նա գնաց դեպի անցյալը, մեր ազգային պատմության խորքերը: «Իմ նպատակն էր,- գրել է նա,- անցյալը իմաստավորել այսօրվանով, իսկ ներկան՝ անցյալով, քանի որ ժամանակի երեք ձեւերը՝ անցյալը, ներկան եւ ապագան, գոյություն ունեն լոկ ամբողջի երրորդության մեջ: «Դար կորստյան» պատմավեպի հիմքում ընկած հայկական պետականության կործանման թեման ծնվեց մեր ժողովրդի գոյության հաստատման գաղափարից, նրա հավերժության եւ անմահության վկայությունն ինձ տարավ մեր պատմության ամենաօրհասական եւ մռայլ ժամանակներից մեկը»[4]: Շարունակելով նույն միտքը «Գրական թերթի» էջերում՝ Վարդան Գրիգորյանը «Մարդու եւ ժամանակի փոխհարաբերությունը» հոդվածում[5] հաստատել է, որ Բագրատունյաց Անիի կործանման թեմայի գեղարվեստական մարմնավորմամբ կամեցել է ցույց տալ նաեւ մեր ազգային պատմության օրհասական պահերին, առավել քան երբեք, ի հայտ եկած ազգի կենսունակությունն ու ոգին, ցավոք սրտի՝ բացասական կողմերը նույնպես: Լեոն գրել է, որ Անին, «Բագրատունյաց թագավորությունը զոհ է դարձել մի ստոր մատնության»[6]: «Թուլական ու մորթապաշտ Հովհաննես-Սմբատը (Գագիկ Առաջին հզոր արքայի որդին, որ թագավորել է 1020-1041 թթ.- Լ. Գ.), կաթողիկոս Պետրոս Գետադարձի ճնշման տակ, Անին կտակում է Բյուզանդիային[7]: Վարդան Գրիգորյանը լայն պլանով է դիտել ու ներկայացրել այդ «մատնությունը» ՝ իր գեղարվեստական ընդհանրացման մեջ ներառելով երեւույթի ողբերգականությունը համահայկական դիտանկյունից:

«Դար կորստյան» պատմավեպի գեղագիտական-փիլիսոփայական կոնցեպցիան արտահայտված է Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունից» քաղած փոքրիկ բնաբանով, որը խտացնում է հայ ազգային ողբերգության մի գլխավոր, թերեւս ամենաէական խորհուրդը՝ մեր դարավոր կորուստների հիմքերի հիմքը՝ անմիաբանության չարիքը. «... Այս է մեղաց պտուղն, զոր ցանեցին հարքն մեր եւ յեւթնապատիկ ժողովեցին»: Մեծ Չարենցի կողմից բանաստեղծորեն բանաձեւված պատգամը, նույնանուն քերթվածում ժողովրդի հավաքական ուժի ու միասնության վերաբերյալ, մեր օրերում նորովի հնչեցրեց Վարդան Գրիգորյանը՝ արծարծելով բոլոր ժամանակների համար կենսական գերխնդիր: Վիպասանի գեղարվեստական առաջադրույթը՝ խարսխված պատմության դարավոր փորձի վրա, շաղախված է արդիական իմաստուն լիցքերով եւ երաշխիքն է ազգության հավերժական գոյատեւումի: Այս բարձր նպատակադրումին Վ. Գրիգորյանը հասել է պատմափիլիսոփայական հստակ աշխարհայեցությամբ, հայ դասական պատմավեպի լավագույն ավանդների յուրացմամբ, ամենից առաջ՝ իր փայլուն տաղանդով, որն անսովոր շատ էջեր է բացում ժամանակակից հայ արձակագրության մեջ: Գրելաձեւի թարմությունը, կուռ լեզուն ու ոճը, կերպավորման արվեստը, կառուցվածքային տարբերակների բազմազանությունը եւ գեղարվեստական այլ հնարքներ Վ. Գրիգորյանի վիպասանությանը տալիս են բոլորովին նոր որակներ, հարստացնում անցյալի թեմատիկայի հայ.գրականությունն անհերքելի արժեքներով:

«Դար կորստյան» պատմավեպը մեկն է գրողի ստեղծած արժեքներից, լինելով ընդամենը երկրորդը «Հավերժական վերադարձից» հետո, եւ, ավա՜ղ, նախավերջինը «Մանյա այրք»-ից առաջ: Զարմանալի հետեւողականությամբ երեք գործերում էլ հեղինակը կոնկրետ ժամանակահատվածներ ու կոնկրետ հերոսներ է ընտրել՝ ձգտելով իրական-պատմական անձնավորությունների գեղարվեստական մարմնավորմամբ վեր հանել տվյալ դարաշրջանի առանցքային միտումները, ազգային ու քաղաքական կյանքի հիմնական օրինաչափությունները: Հատկանշական է, որ Վ. Գրիգորյանը իր վեպերում ձեռնարկել է մասշտաբային պրոբլեմների լուծման, բայց առավելապես ոչ թե լայնորեն հայտնին ու գեղարվեատական գրականության մեջ շատ մշակված դեպքերի կամ հաճախ կերպավորված պատմական դեպքերի միջոցով, այլ քիչ, նույնիսկ պատմագրու-

թյանն ընդհանուր գծերով ծանոթ դեպքերի ու դեմքերի: Այս իմաստով՝ բնութագրական է հենց «Դար կորստյան» պատմավեպը, որի կենտրոնական հերոսը Գայլ Արշավիրն է, հեղինակի իդեալը՝ պատմական թեմատիկայի գեղարվեստական նախասիրության մեջ:

Խոսելով իդեալ հերոսի տիպաբանական սկզբունքների մասին՝ գրականագետ Գեորգի Ֆրիդլենդերը գրում է, թե Արեւմտյան Եվրոպայում եւ Ռուսաստանում, 19-րդ դարասկզբի ռոմանտիկները, իրենց իդեալը հեռավոր կամ մոտ անցյալի դրվագներում գեղարվեստորեն մարմնավորելու նպատակով դիմել են երեւակայության օգնությանը: Մինչդեռ «ռեալիստական ուղղության գրողները գրականության առջեւ խնդիր են դրել իդեալի համար հենասյուներ գտնել բուն իրականության մեջ, հասարակական կյանքի ռեալ ուժերի եւ միտումների պայքարի ու բախումների մեջ»[8]:

Ժամանակակից գեղարվեստական որոնումներում պատմավիպասանները ու անցյալի գրական այլ մշակումների հեղինակները ավելի հաճախ նախընտրում են 19-րդ դարի ռեալիստական ուղղության սկզբունքները, անշուշտ, նոր մոտեցումներով, արդիական հայեցությամբ ու չափանիշներով: Վ. Գրիգորյանն իր իդեալ հերոսին՝ Գայլ Արշավիրին որոնել ու գտել է 11-րդ դարի հայոց պատմության ամենադրամատիկ ու հանգուցային իրադարձությունների համապատկերում, իրական բախումների ու ներքին սուր հակամարտությունների հորձանքում: Իր կերպարը հասցնելով մոնումենտալության՝ վիպասանը ճշմարիտ արվեստով ու համոզիչ ընդհանրացումներով գեղանկարել է ամբողջ պատմաշրջանի քաղաքական, ազգային ու հասարակական կացությունը, ներքին ու արտաքին կոնֆլիկտները, մարդկային ու բարոյական կյանքի պատկերը: Եվ այս ամենն այնպիսի իմացությամբ, պատմական ու գեղարվեստական փաստերի այնպիսի համադրությամբ, ասես մեկտեղվել են պատմաբան-տարեգիրն ու գրող-արվեստագետը, անցյալի խոր հետախույզն ու վավերական դեպքերի պատկերահան-մեկնաբանը: Անտարակույս, Վ. Գրիգորյանին շատ է օգնել պատմաբանի գիտելիքները եւ այն պրպտումները, որոնք կատարվել են ժամանակաշրջանի իրադարձությունները, պատմական եղելությունները, ստուգապատում անցքերն ու հերոսների կյանքն ամենայն խորությամբ ուսումնասիրելու մղումով:

Հեռավոր պատմության ծանոթ ու անհայտ էջերը ստեղծելիս Վ. Գրիգորյանը չի գնացել տրորված արահետներով: Նրա «Դար կորստյան» վեպում փառքի դափնիները չեն բաժանվում, ոչ էլ հնչում են հաղթական օվսաննաներ: Նրա իդեալ հերոսը շրջապատի կողմից ոչ միայն մեծարանքների, նույնիսկ խրախուսանքի չի արժանանում: Ավելին Գայլ Արշավիրը շարունակ հալածվում է, անարդար կերպով մեղադրվում գործած ու չգործած արարքների մեջ, ենթարկվում հոգեկան ու ֆիզիկական խոշտանգումների: Միջավայրը մերժում է նրան, անհանդուրժողական վերաբերմունք ցուցաբերում անգամ նրա խիզախումների, անհավասար մաքառումների ու աներեւակայելի հաղթանակների նկատմամբ: Սակայն նա մնում է իր ինքնության հետ անկախ, վճռական ու համարձակ: Կրելով ամենահետին զրկանքներն ու չարչարանքները չի հրաժարվում երբեք համոզմունքներից եւ դառնում է հեղինակի այն իդեալը, որով պատմությունն է նժարվում: Վ. Գրիգորյանը Գայլ Արշավիրի կերպարում օրգանապես միաձուլել է եւ բարձր սկզբունքների կրողին, ազգային ոգու մարմնավորողին, քաջ ու անկոտրում մարտնչողին, եւ ժողովրդի մարդուն, ազգի ու հայրենիքի ցավը սեփական սրտով զգացող ու ապրող զորականին:

Այդ կերպարով հեղինակը կարողացել է լավագույնս արտահայտել իր գեղագիտական դավանանքը, իր պատմափիլիսոփայությունը մեր անցյալի, մեր կորուստների ու մաքառումների, հայ ժողովրդի ազգային ճակատագրի վերաբերյալ: Իսկ այդ դավանանքն ու պատմափիլիսոփայությունը պայմանավորված են հայոց դարավոր պատմության ողջ ընթացքով: Որքան էլ պատմությունն ու ճակատագիրը հայ ժողովրդին մշտապես կանգնեցրել են սուր երկընտրանքների առջեւ, ու կորուստները եղել են անխուսափելի, աղետները անբաժան, սակայն անգամ ամենաանելանելի դրություններում իսկ գտնվել են հզոր անհատակություններ, փրկություն ու արդարություն որոնողներ, ռահվիրաներ ու նահատակ-մարտիրոսներ, որոնք արյան ու կյանքի գնով կանգնել են շարժման գլուխ եւ ժողովրդին ու հայրենիքին տարել անհավասար պայքարի, երկրի ու հավատի համար կռվել աննահանջ: Սա է եղել հայոց պատմության պարտադրանքը, եւ այդ տրամաբանությամբ են առաջնորդվել մեր դասական պատմավիպասաններն իրենց ստեղծագործություններում: Խ. Աբովյանն ու Ծերենցը, Ռաֆֆին ու Մուրացանը, Դ. Դեմիրճյանն ու Ստ. Զորյանը, հայ կյանքից, հայ

պատմությունից են քաղել Աղասուն ու խութեցի Հովնանին, Սամվելին, Դավիթ-Բեկին ու Գեւորգ Մարգպետունուն, Վարդան Մամիկոնյանին ու Պապին: Նրանք ծնվեցին Մեծ Կարիքից,- ինչպես կասեր Պարույր Սեւակը: Անփոխարինելի դեր ունեին պատմության մեջ ու հայրենիքի հանդեպ եւ անձնազոհությամբ նվիրվեցին իրենց դերակատարումին: Ս. Խանզադյանի, Հովհ. Ղուկասյանի, Ս. Այվազյանի, Հ. Խաչատրյանի, Պ. Չեյթունցյանի պատմավեպերում նույնպես ապրումգործում են նույնատիպ հերոսներ՝ ծնված այս հողից ու ժողովրդից: Ու թեկուզ չար ժամանակներն ու հանգամանքները հաճախ մեր հայրենիքին ու ժողովրդին կանգնեցրել են կործանման վտանգի առաջ, սակայն նրա առաքյալ զավակները միշտ էլ ծանր վիճակից դուրս գալու ուղիներ են որոնել: Անսարսափ նայել են մահվան աչքերին՝ հայրենի աշխարհի ազատության տենչանքով:

Վ. Գրիգորյանի հերոսը իր խոհերի մեջ մոլորված մտմտում է, որ հայերը՝ «հոգնել էին ճակատագրից, հոգնել էին ողբից ու արյունից: Հոգնել էին սպասելուց ու հավատալուց: Հոգնել էին աստծուց»: Ու բողոքում էին աստծուն. «Քեզ լինի տվածդ: Մի երկիր ես տվել, հազար թշնամի: Կառուցելու երկու ձեռք ես տվել, հազար քանդող ուղարկել: Ե՛տ առ տվածդ»: Ու Գայլ Արշավիրը, այս խոհերով հանդերձ, երբեք չթողեց, որ սուրը ժանգոտեր պատյանում, թափառում էր մեկ վայրից մյուսը, զորական ու մարգարե դարձած՝ հորդորում ժողովրդին հոռոմներից ու թուրքերից չսպասել գթության, կռվով տնօրինել սեփական բախտը: Ահա՛ նախորդների գեղարվեստական ժառանգության հետքերով եւ գրող-պատմաբանի սուր կռահումներով՝ Վ. Գրիգորյանը հաստատեց իդեալ հերոսի իր գաղափարաբանությունը եւ այդ դիտանկյունից գնաց հեռավոր անցյալի բովանդակության բացահայտումը:

«Դար կորստյան» պատմավեպի հերոսի՝ Գայլ Արշավիրի մասին Վ. Գրիգորյանը տալիս է այս բացատրությունը. իր թշնամիներից է Արշավիրը ստացել «Գայլ» մականունը: Նրա կերպարում, այո՛, կան եւ՛ դաժանություն, եւ՛ այլ ծայրահեղություններ: Չպետք է նույնացնել հերոսին հեղինակի հետ: Հերոսի դաժանությունը հետեւանք է 11-րդ դարի ծանր իրադարձությունների, երբ անկում ապրեց հայկական պետականությունը: Հենց այդ կորստյան ցավն ու հայրենիքի հանդեպ անսահման սերը ծնեցին Գայլ Արշավիրի դաժանությունը: Նա դառնորեն եւ խիստ խոսքերով հանդիմանում է վերին իշխանավորներին՝ Բագրա-

տունյաց, Արծրունյաց եւ ուրիշ արքայատոհմերի, որոնք լքում են հայրենիքը, Հայաստանը, ապաստան որոնում կամ ծառայում փոքրասիական այլ նահանգներում. «... Հազար կտոր արեք, դեն նետեք ճամփորդի ցուպը, որովհետեւ երկրից ելածը նոր հայրենիք չի գտնի...»: Գայլ Արշավիրի այս կոչ-պատվիրանը արդիական հզոր հնչողություն ունի եւ ինչպես 11-րդ դարում, այնպես էլ մեր օրերում նույնչափ նոր ու կենսական արժեք է ստանում: Պատմավիպասանը իր հերոսի կերպարով խտացրել է ժողովրդի ոգին, նրա կամքը, հնչեցրել ազգահավաքի այն կենսական ձայնը, որ անմարելի է մնացել դարերի հոլովույթում:

«Դար կորստյան» պատմավեպի կառուցվածքը միանգամայն ինքնատիպ է ու շատ բնութագրական հեղինակի ստեղծագործական խառնվածքին: Վ. Գրիգորյանը խոհական-փիլիսոփայական նկարագրի գրող է, ներհուն սուզումների արձակագիր: Նրա հերոսներն առավելապես ինքնաքննության, ինքնազննումների ու ինքնավերլուծությունների միջոցով են անձնավորվում, հաստատում իրենց անհատականությունը: Եղարունակ իրենց հետ են, ներանձնացած, բայց սեփական ես-ի միջով անց են կացնում ժամանակի, միջավայրի ու մարդկանց կապերը, հարաբերությունները, այդ կերպ բացահայտում երեւույթներն ու իրադարձությունները: «Հավերժական վերադարձի» Սիմեոնը, Կոստանդինը, Հուստոսը գեղարվեստական այդ հնարանքով դարձել են կենդանի բնավորություններ: Նրանց հոգու խորքը, կյանքի ու մեծ աշխարհի հետ բախումներն ու առնչությունները Վ. Գրիգորյանը պայմանավորել է «ներքին մարդու» հետախուզման սկզբունքով: Նույնիսկ իր ամուր որդեգրած գրական նախասիրության դիտանկյունից՝ «Դար կորստյան» ստեղծագործությունը բացառիկ կառուցվածք ունի: Գլխավոր հերոսը՝ Գայլ Արշավիրը, մահվան մահճում, հիշողությունների երկարածիգ ժապավենով, վերապրում է իր կյանքի բարդ ու դրամատիկ հաղթանակներով ու պարտություններով անցած ճանապարհը, բայց ոչ թե ներկայացնելու համար անձնական կենսապատումը, այլ, առաջին հերթին, ազգային ճակատագրով՝ կոնկրետ Բագրատունյաց թագավորության անկման պատմությունը՝ իր ծանր հետեւանքներով, մեծ ու փոքր դրվագներով, հերոսական ու ողբերգական անցքերով: Գայլ Արշավիրի ինքնապատումը հյուսվում է բնականորեն, հընթացս համազգային պրոբլեմների արծարծման: Նա է գործողությունների կենտրոնում, ինքն է վարում անցքերը, ինչպես ասում են՝ իր սրտի միջով են

անցնում ժամանակի դեպքերը, եւ պետք է դրանց բեկումներով ցոլանար նաեւ նրա կյանքը: Սակայն վերջինը ստորադասված է ազգայինին, հերոսի մորմոքների ու խոհերի առանցքը հայ ժողովուրդն է, Հայոց երկիրը: Ամենաօրհասական պահերին անգամ, իր ֆիզիկական ու բարոյական առավել դաժան վիճակներում իսկ՝ Գայլ Արշավիրի ցավն ու մտահոգությունը հայրենիքն է, շնչում է միայն Հայաստան աշխարհի բախտով:

Եվ այսպես, ստեղծագործության էպիկական հյուսվածքի պատումածեւը գեղարվեստական վերհուշն է, որ ներքին մենախոսության շերտերով հորձանքհորձանք բացում է մեր առջեւ մի ամբողջ պատմաշրջանի քաղաքական ու ազգային նշանակալից իրադարձություններ՝ ներառելով նաեւ երկրի ու հասարակական կյանքի այլեւայլ խնդիրներ: Չափազանց դժվարին կառուցվածք է ընտրել վիպասանը. ամբողջ վեպը վարել մեկ հերոսի անունից՝ այն էլ կյանքի վերջին օրերին՝ իրեն այնքան չարչարող հիշողությունների կծիկ-շարանով, այդ հիշողություններում խլացնել ամբողջ պատմաշրջանը, հայ-բյուզանդական քաղաքական բախումները, թուրք ու սելջուկ ցեղախմբերի հրոսակային արշավանքները, հայ իշխանավորների ու նախարարական տների գժտություններն ու անմիաբանությունը՝ իսկական գրողի տաղանդ էր պետք այդ ամենը գեղարվեստորեն ու համոզիչ լուծելու համար: Վ. Գրիգորյանը հաջողությամբ է լուծել մտահղացումը՝ ստեղծելով ներքնատես փիլիսոփա-քաղաքագետի, աննկուն զորականի սքանչելի կերպար եւ ամբողջության մեջ, գեղեցիկ մի պատմավեպ, որը ենթարկվում է ժամանակակից վիպասանության չափանիշներին ու թարմ խոսք է հայ արձակագրության արդի փուլում:

---

[1] «Սովետական գրականություն», 1983, թիվ 1, 2:
[2] «Գրքերի աշխարհ», 1985, N 4:
[3] Նույն տեղում:
[4] «Գրքերի աշխարհ», 1985, N 4:
[5] «Գրական թերթ», 1985, 19 ապրիլի:
[6] Լեո, Երկերի ժողովածու, հ. 8, 1985, էջ 183:
[7] Ա. Սարգսյան, Ա. Հակոբյան, Հայոց պատմություն, 1996, էջ 88:
[8] Г.М.Фриндлер, Реализм Достоевского, 1964, стр. 218